ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 13 ՀՈՒՆԻՍ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ N << ԱՄԱՀ-ԳՀԱՇՁԲ 17/26 >> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԳՐԻ 5.1.2 ԵՆԹԱԿԵՏԻ ՀԻՄՔՈՎ՝ ՆԱԽԱՏԵՍՎԵԼ ԵՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՈՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿՆՔՎՈՒՄ Է ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ:

ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ք. Արտաշատ <<07>> <<հուլիս>> 2017 թ.

<<Արտաշատի համայնքապետարան>>-ը, ի դեմս համայնքի ղեկավարի Ժ/Պ Իս. Գրիգորյանի, որը գործում է <<կազմակերպության>> կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Շինպլյուս>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տիգրան Նազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <<Արտաշատ համայնքի Արարատյան թիվ 1բազմաբնակարան բնակելի շենքերի բակերի բարեկարգման և ասֆալտբետոնյա ծածկի կապիտալ վերանորոգման>> աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն համաձայնագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ <<համաձայնագիրը կնքելու պահից սկսած մինչև 10 օրացուցային օր:>>:

Սույն համաձայնագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն համաձայնագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել

Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն համաձայնագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն համաձայնագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն համաձայնագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն համաձայնագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն համաձայնագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն համաձայնագրին օրենքով կամ սույն համաձայնագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն համաձայնագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն համաձայնագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն համաձայնագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն համաձայնագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն համաձայնագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն համաձայնագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն համաձայնագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն համաձայնագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն համաձայնագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն համաձայնագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Սույն համաձայնագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 համաձայնագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ համաձայնագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն համաձայնագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում համաձայնագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես

նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում համաձայնագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է համաձայնագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն համաձայնագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է համաձայնագրի գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ համաձայնագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Աշխատանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 4.2-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն համաձայնագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում համաձայնագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն համաձայնագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության

օրենադրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը համաձայնագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է համաձայնագրի պայմաններին, ապա ստորագրվում է համաձայնագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում համաձայնագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված համաձայնագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը, Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 համաձայնագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **1952677** (մեկ միլիոն ինը հարյուր հիսուներկու հազար վեց հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ, որից 325446.166 (երեք հարյուր քսանհինգ հազար չորս հարյուր քառասունվեց ամբողջ հարյուր վաթսունվեց հարյուրերորդական ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 համաձայնագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն համաձայնագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական

միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբեր 2017 թ.՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն համաձայնագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն համաձայնագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն համաձայնագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն համաձայնագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով համաձայնագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Սույն համաձայնագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն համաձայնագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն համաձայնագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն համաձայնագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները,

[1] Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված համապատասխան չափաբաժնի գինն է:

[2] Պայմանագիրը օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա բյուջեում նախատեսված ֆինանսական միջոցներ և կնքվի համաձայնագիր

հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել համաձայնագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև համաձայնագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու համաձայնագիրը. Եթե արձանագրված խախտումները մինչև համաձայնագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում համաձայնագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն համաձայնագրի ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն համաձայնագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն համաձայնագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն համաձայնագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

8.8 համաձայնագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, համաձայնագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով համաձայնագիրը ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է

Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն համաձայնագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են համաձայնագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել համաձայնագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.11 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն համաձայնագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն համաձայնագիրը հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Արտաշատի համայնքապետարան	<<Շինպլյուս>> ՍՊԸ
ք.Արտաշատ Օգոստոսի 23/62	ք. Երևան, Աշտարակի խճուղի 47/3
ՀՎՀՀ՝ 04201153	ՀՎՀՀ՝ 00891777
Հ/Հ՝ 900412151509	Հ/Հ՝ 220553330550000
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Համայնքի ղեկավարի Ժ/Պ	Տնօրեն՝
Իս.Գրիգորյան	Տիգրան Նազարյան

Կողմերի համաձայնության դեպքում պայմանագրի նախագծի մասերը կարող են փոփոխվել ՀՀ օրենսդրությամբ տրամադրված հնարավորությունների:

Հավելված թիվ 1
«07» հոկտեմբեր 2021 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ « 1 » գնման հանձնաժողովի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[3*]

«ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐՈՅԱՆ ԹԻՎ 1 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆՅԱ ԾԱԾԿԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N/N	Աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Ծավալ	Միավորի արժեքը	Ընդամենը
	Արարատյան թիվ 1 բազմաբնակարան բնակելի շենքի բակի բարեկարգում և ասֆալտբետոնյա ծածկի կապիտալ վերանորոգում				
	Երթևեկելի մաս				
1	Երթևեկելի մասի մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	Մմ	467,99	3 190	1 492 877
	Ընդամենը				1 492 877
	Շահույթ 9%				134 358
	Ընդամենը				1 627 231
	ԱԱՀ 20%				[illegible]
	Ընդամենը				1 952 677

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք.Արտաշատ Արարատյան թիվ 1. հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Արտաշատի համայնքապետարան
ք.Արտաշատ Օգոստոսի 23/62
ՀՎՀՀ՝ 04201153
Հ/Հ՝ 900412151509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավարի Ժ/Պ
Խ.Գրիգորյան

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Շինպլյուս» ՍՊԸ
ք. Երևան, Աշտարակի խճուղի 47/3
ՀՎՀՀ՝ 00891777
Հ/Հ՝ 220553330550000
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Տնօրեն՝
Տիգրան Ն[illegible]

Հավելված թիվ 2
<<07>> հուլիս 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << 1 >> գնման համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

<<ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐՏՅԱՆ ԹԻՎ 1 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ [illegible] ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆՅԱ ԾԱԾԿԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ >> ԱՇԽԱՏԱՆ[illegible] ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
5	Երթևեկելի մասի մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	Պայմանագրի կնքման օրվանից հաշված	10-րդ օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օրվանից հաշված	10 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Արտաշատի համայնքապետարան
ք.Արտաշատ Օգոստոսի 23/62
ՀՎՀՀ՝ 04201153
Հ/Հ՝ 900412151509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավարի ժ/Պ
Իս.Գրիգորյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Շինպլյուս>> ՍՊԸ
ք. Երևան, Աշտարակի խճուղի 47/3
ՀՎՀՀ՝ 00891777
Հ/Հ՝ 220553330550000
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Տնօրեն՝
Տիգրան Նազարյան

Հավելված թիվ 3
<<07>> հուլիս 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << 1 >> գնման համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1.	ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՐՏՅԱՆ ԹԻՎ 1 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԲԱԿԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆՅԱ ԾԱԾԿԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ	—	—	—	—	—	—	1952677	1952677	1952677	1952677	1952677	1952677	1952677

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Արտաշատի համայնքապետարան
ք.Արտաշատ Օգոստոսի 23/62
ՀՎՀՀ՝ 04201153
Հ/Հ՝ 900412151509
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավարի ժ/պ
Ռ. Գրիգորյան
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Շինպլյուս>> ՍՊԸ
ք. Երևան, Աշտարակի խճուղի 47/3
ՀՎՀՀ՝ 00891777
Հ/Հ՝ 220553330550000
<<Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Տնօրեն՝
Տիգրան Նազարյան